Բ. Ս. ՕՀԱՆՋԱՆՅԱՆ

ՍՄԿՊ XXIII ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ ԵՎ ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ՈՒ ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆ ԴԱՇԻՆՔԻ ՀԵՏԱԳԱ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Սովետական Միության կոմունիստական կուսակցության XXIII համագումարը վիթխարի երևույթ է մեր երկրի պատմության մեջ, միջազգային կոմունիստական շարժման համար։ Համագումարը լսեց ու քննարկեց ՍՄԿՊ Կենտկոմի հաշվետու զեկուցումը, որով հանդես եկավ Լ. Ի. Բրեժնևը, և լիովին հավանություն տվեց Կենտկոմի քաղաքական գծին ու պրակտիկ գործունեությանը։ Նա քննարկեց նաև ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության զարգացման 1966—1970 թվականների հնգամյա պլանի դիրեկտիվները, որոնց մասին զեկուցեց Ա. Ն. Կոսիգինը։ Համագումարը մասնակի փոփոխություններ մտցրեց ՍՄԿՊ կանոնադրության մեջ, ընդունեց հայտարարություն՝ Վիետնամում ԱՄՆ-ի ագրեսիայի առթիվ։ Ընտրեց կուսակցության կենտրոնական օրգանները։ Համագումարը քննարկեց կուսակցության քաղաքական, տնտեսական, գաղափարական և կազմակերպչական գործունեությունը, ամփոփեց ՍՄԿՊ XXII համագումարից հետո սովետական ժողովրդի հերոսական աշխատանքի արդյունքները, մշակեց կուսակցության մոտակա տարիների քաղաքական գիծը։

Համագումարի նյութերում կարևոր տեղ են գրավում բանվոր դասակարգի և կոլտնտեսային գյուղացիության դաշինքի հետագա զարգացման հարցերը։

Սովետական Միության կոմունիստական կուսակցության XXII և XXIII համագումարների միջև ընկած ժամանակաշրջանը հագեցած էր ինչպես երկրի ներքին, այնպես էլ միջազգային կյանքի մեծ ու կարևոր իրադարձություններով։ Ինչպես նշված է ՍՄԿՊ XXIII համագումարի բանաձևում «Այդ ժամանակամիջոցում խոշոր հաջողություններ ձեռք բերվեցին էկոնոմիկայի, կուլտուրայի զարգացման գործում։ Ամրապնդվեցին սովետական հասարակության քաղաքական հիմքերը՝ բանվոր դասակարգի և կոլտնտեսային գյուղացիության դաշինքը, բազմազգ Սովետական Միության ժողովուրդների բարեկամությունը, բոլոր աշխատավորների համախմբվածությունը ՍՄԿՊ-ի շուրջը։ Ընդլայնվեցին ՍՄԿՊ շարքերը, բարձրացավ պարտիայի քաղաքական ու կազմակերպչական գերը սովետական հասարակության մեջ։ Պարտիայի մեջ ամուր կերպով հաստատվեցին ներպարտիական կյանքի լենինյան սկզբունքները»[1]։

Բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիության դաշինքի պատմությունը սոցիալիստական հասարակության կարևոր պրոբլեմներից մեկն է։ Այդ դաշինքը անցել է հարուստ ուղի։ Տակավին XIX դարի երկրորդ կեսին գիտական կոմունիզմի հիմնադիրներ Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսը մշակեցին բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի տեսությունը։ Հետագայում Վ. Ի. Լենինը զարգացնելով մարքսիստական ուսմունքը, դինեց Սովետական Միու-

---

1 *Տե՛ս Սովետական Միության կոմունիստական կուսակցության XXIII համագումարի բանաձևը, «Սովետական Հայաստան», 9 ապրիլի, 1966։*

թյան կոմունիստական կուսակցությանը, նոր հեղափոխական դրություններով և մեր երկրի ժողովուրդների կուսակցության ղեկավարությամբ հաղթանակով պսակեցին սոցիալիստական հեղափոխությունը։ Լենինը բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքը համարում էր պրոլետարիատի դիկտատուրայի բարձրագույն սկզբունքը, պրոլետարիատի քաղաքական իշխանության հիմքերի հիմքը։ Սոցիալիստական հասարակարգի կառուցման տարբեր էտապներում աշխատավորական այդ երկու դասակարգերի դաշինքը ստացել է նոր ձև և ավելի կոստարելադրծվել։

Շնորհիվ բանվոր դասակարգի և գյուղացիության ամրակուռ դաշինքի սովետական պետությունը մեծագույն հաղթանակ տարավ քաղաքացիական կռիվներում, կործանդնեց քայքայված ժողովրդական տնտեսությունը, կենսագործեց ինդուստրացման և գյուղատնտեսության կոլեկտիվացման լենինյան պլանը, նորանոր նվաճումներ ձեռք բերեց կուլտուրական հեղափոխության բնագավառում։ Երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրեին, ավարտվեց սոցիալիզմի կառուցումը ՍՍՌՄ-ում։

Սովետական Միության Հայրենական մեծ պատերազմի տարիներին ավելի քան ամրապնդվեց բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքը, այն դարձավ հզոր ուժ ֆաշիզմի դեմ մղվող պայքարում։ Այդ դաշինքը հանդիսացավ պատերազմում սովետական ժողովրդի հաղթանակի հիմնական պայմաններից մեկը։

Պատերազմի հաղթական ավարտից հետո կուսակցությունը և սովետական կառավարությունը բանվոր դասակարգի և կոլտնտեսային գյուղացիության ուժերը մոբիլիզացրին ժողովրդական տնտեսության վերականգնման ու զարգացման չորրորդ հնգամյակի խնդիրները կատարելու համար։ Վերականգնվեցին գյուղատնտեսական մեքենաշինական գործարանները, ընդլայնվեց տրակտորների արտադրությունը, խոշորացվեցին կոլտնտեսությունները, բուժվեցին պատերազմի հասցրած վերքերը։ Բայց գյուղատնտեսության զարգացման բնագավառում կային լուրջ թերություններ, որոնց հաղթահարման ուղիները նշեց Սովետական Միության կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեի սեպտեմբերյան (1953 թ.) պլենումը։

Մեր ընդգրկած ժամանակաշրջանը բաժանվում է երկու էտապի՝ սոցիալիզմի կառուցման ավարտման (1950—1958 թթ.) և կոմունիզմի ծավալուն շինարարության (1959—1965 թթ.) ժամանակաշրջանների։ Պատմության այդ առաջին էտապը բնորոշվում է նրանով, որ կուսակցությունը մեծ աշխատանք ծավալեց ժողովրդական տնտեսության վերելքն ապահովելու, սոցիալիզմի կառուցումն ավարտելու և կոմունիստական շինարարության գործնական խնդիրները լուծելու համար։ Այդ տարիներին կուսակցությունը և սովետական կառավարությունը շարունակում էին պայքարել հանուն խաղաղության պահպանման, ժողովուրդների միջև բարեկամության ամրապնդման։ Ծանր արդյունաբերության զարգացման հետ մեկտեղ, կուսակցությունը պայքար ծավալեց նաև գյուղատնտեսության վերելքի, աշխատավորության նյութական ու կուլտուրական մակարդակի բարձրացման համար։ ՍՄԿՊ Կենտկոմի ձեռնարկած միջոցառումների շնորհիվ ամրապնդվեց սովետական պետական և հասարակական կարգը, բացահայտվեցին և վերացվեցին Ստալինի անձի պաշտամունքի վնասակար հետևանքները կուսակցական ու պետական գործունեության,

տնտեսական ու կուլտուրական շինարարության բնագավառներում։ Նոր զարգացում ապրեց սոցիալիստական դեմոկրատիան։

Երկրորդ էտապը բնորոշվում է նրանով, որ Սովետական Միությունը թևակոխեց կոմունիզմի ծավալուն կառուցման ժամանակաշրջանը, ընդունվեց ՍՄԿՊ նոր ծրագիրը, սովետական պետությունը մտավ իր զարգացման նոր էտապը, պրոլետարիատի դիկտատուրան վերաճեց համաժողովրդական պետության, բանվոր դասակարգի կուսակցությունը դարձավ համաժողովրդական կուսակցություն։ Կոմունիստական կուսակցությունը և սովետական կառավարությունը շարունակում են պայքարը հանուն խաղաղության և գաղութային ստրկության լիակատար վերացման ամբողջ աշխարհում։

1950—1965 թվականներին լուրջ տեղաշարժ կատարվեց մեր երկրի, այդ թվում նաև Հայաստանի, բանվոր դասակարգի կյանքում։ Նրա շարքերում զգալիորեն ավելացան միջնակարգ և բարձրագույն կրթություն ունեցողները, քանակապես և որակապես աճեց հատկապես ծանր արդյունաբերության մեջ աշխատող բանվորության կազմը։ Մեծ չափերի հասան գյուտարարությունը և ռացիոնալիզատորությունը։ Այդ շարժումը ծավալվեց նաև գյուղատնտեսական մեքենաշինության մեջ։ Եթե հանրապետությունում բանվոր-ծառայողների թիվը 1940 թ. կազմում էր 142,2 հազար, այժմ այն կազմում է 630 հազար։

Բանվոր դասակարգն իր շարքերից գյուղ ուղարկեց հազարավոր մեխանիզատորներ։ Խորացնելով ու զարգացնելով իր դաշինքը կոլտնտեսային գյուղացիության հետ, բանվոր դասակարգն ավելի ակտիվորեն միջամտեց գյուղատնտեսության նյութա-տեխնիկական բազայի ստեղծմանը և զարգացմանը։

Բանվոր դասակարգի օգնությամբ գյուղատնտեսության մի շարք ճյուղեր ենթարկվեցին համակողմանի մեքենայացման։ Այսպիսով, այդ ժամանակամիջոցում բանվոր դասակարգի և կոլտնտեսային գյուղացիության դաշինքի բնորոշ կողմերից մեկն այն էր, որ ավելի մեծ չափերով էին ամրապնդվում արդյունաբերության և գյուղատնտեսության տնտեսական կապերը, որոնք արտահայտվում էին գյուղատնտեսության տեխնիկական զինման, թեթև և սննդի արդյունաբերությունը հումքով բավարարելու, քաղաքի և գյուղի միջև առևտուրը և ապրանքաշրջանառությունը ուժեղացնելու միջոցով և այլն։

Կոմպլեքսային մեքենայացումը, ավտոմատացումը, քիմիայի նվաճումների ներդրումները տեղի են ունենում ոչ միայն արդյունաբերության, այլ նաև գյուղատնտեսության մեջ։ Բանվոր դասակարգի օրինակով կոլտնտեսային գյուղացիությունը բարձրացնում է աշխատանքի արտադրողականությունը։ Սոցիալիստական գյուղատնտեսության մեջ տեխնիկական առաջընթացը ապահովում է՝ սոցիալիստական արդյունաբերության մեջ աշխատող բանվորների և ինժեներների ջանքերով։

Սովետական Միության բանվոր դասակարգը հանդիսանում է նորարարների դասակարգ, որը ղեկավարում և ուղղություն է տալիս տեխնիկական առաջադիմությանը ոչ միայն արդյունաբերության, այլ նաև գյուղատնտեսության մեջ, զարկ է տալիս արտադրական ուժերի բուռն զարգացմանը։

Բանվոր դասակարգի և կոլտնտեսային գյուղացիության դաշինքի կարևոր կողմերից մեկն էլ հանդիսանում է սովետական գյուղատնտեսության տեխնիկական հագեցվածության բուռն զարգացումը, քաղաքի տեխնիկական համակողմանի օգնությունը գյուղին։ Դրա շնորհիվ երկրում լայնորեն ծավալվեց գյուղատնտեսության տարբեր գոտիների համար մեքենաների նոր տեսակների

ստեղծումը, որը հնարավորություն տվեց բարձրացնելու գյուղատնտեսության մեքենայացման մակարդակը։ Բանվորները, ինժեներները, կոնստրուկտորները, գիտնականները և գյուղատնտեսության մեխանիզատորներն իրենց հայրենանվեր խանդավառ աշխատանքով բարձրացրին գյուղատնտեսության մեքենայացման մակարդակը։ Մեր երկրի գյուղատնտեսության մեջ կոմպլեքսային մեքենայացման և տեխնիկական առաջադիմության համար վճռական պայքար սկսվեց հատկապես ՍՄԿՊ XX համագումարից (1956 թ. փետրվար) հետո։ Ելնելով պատմական այդ համագումարի որոշումներից Սովետական Միության կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեն և սովետական կառավարությունը ցուցումներ տվեցին հայրենական տրակտորային և գյուղատնտեսական մեքենաշինության արդյունաբերությանը՝ գարկ տալ կոլտնտեսությունների և սովխոզների կարիքների համար նոր մեքենաների ստեղծմանը և մասսայական արտադրությանը։ Կենսագործելով կուսակցության և կառավարության առաջադրանքները, արդյունաբերության ձեռնարկությունների բանվորները, ինժեներները և կոնստրուկտորները գիտնականների հետ սերտ համագործակցած, կարճ ժամանակում ստեղծեցին գյուղատնտեսական մեքենաների նոր, կատարելագործված բազմաթիվ տեսակներ, ավտոմատ սարքավորումներ և այլն, որոնք լայն օգտագործում գտան հողագործության և անասնապահության մեջ։

Մեր ուսումնասիրած վտապի առաջին ժամանակաշրջանում՝ 1950—1958 թվականներին, բանվոր դասակարգի և կոլտնտեսային գյուղացիության դաշինքի բնորոշ կողմերից մեկն էլ այն էր, որ ինչպես սոցիալիստական արդյունաբերության, այնպես էլ գյուղատնտեսության մեջ զգալիորեն աճեցին պետական ներդրումները։

Այդ ժամանակաշրջանի բնորոշ կողմերից մյուսը բանվոր դասակարգի և կոլտնտեսային գյուղացիության ստեղծագործական ակտիվությունն էր։ Դրա լավագույն արտահայտությունն այն է, որ բանվոր դասակարգը ծավալելով սոցիալիստական մրցությունը, իսկ վերջին տարիներին նրա կատարելագործված, բարձրագույն ձևը՝ կոմունիստական աշխատանքի բրիգադների վիթխարի շարժումը, պայքարում է գյուղատնտեսությանը տալ ավելի շատ տրակտորներ, մեքենաներ, սարքավորումներ։ Կոլտնտեսային գյուղացիությունը նույնպես մտնելով համաժողովրդական սոցիալիստական մրցության մեջ, պայքարում է ավելացնելու գյուղատնտեսական մթերքների արտադրությունը՝ առավելապես օգտագործելով բոլոր ռեզերվները, գյուղատնտեսության ինտենսիֆիկացումը և այլն։ Դեռևս 1959 թվականին Արտաշատի կոլտնտեսության տրակտորային բրիգադավար Հ. Բարսեղյանը դարձավ «հարուստ հեկտարի համար» շարժման նախաձեռնողն ու կազմակերպիչը։

Բանվոր դասակարգի և կոլտնտեսային գյուղացիության դաշինքի մյուս բնորոշ կողմն այն էր, որ այդ ժամանակ հանդես եկան պետական-կոլտնտեսային-կոոպերատիվ համատեղ ձեռնարկություններ, որոնք ավելի էին ամրապնդում քաղաքի և գյուղի, պետական ու կոոպերատիվ հաստատությունների կապերը։

Աշխատավորական երկու դասակարգերի մեջ դաշինքն ամրապնդվում էր նաև գյուղատնտեսության էլեկտրիֆիկացման շնորհիվ։ Այդ տարիներին հանրապետության բոլոր կոլտնտեսությունները էլեկտրիֆիկացիայի ենթարկվեցին, հնարավորություն ստեղծվեց մեքենայացնելու կոլտնտեսային աշխա-

տանքի աշխատատար շատ պրոցեսներ, բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը նաև գյուղատնտեսության մեջ։

Դրան զուգընթաց լայնորեն ծավալվեց ջրաշինարարությունը, որը հնարավորություն տվեց փոխել հանրապետության գյուղատնտեսության ուղղությունը, քիչ եկամտաբեր կուլտուրաները աստիճանաբար դուրս էին մղվում ցանքաշրջանառությունից և նրանց փոխարեն ընդարձակվում էին տեխնիկական և բարձր եկամտաբեր կուլտուրաների ցանքերը։

Հանրապետությունում մեծ ծավալ ստացավ միջգյուղական և միջշրջանային ճանապարհաշինարարությունը, որը գյուղը կապում էր արդյունաբերական կենտրոնների կուլտուրական օջախների հետ։ Ինչպես գյուղատնտեսության էլեկտրիֆիկացիան, այնպես էլ ջրաշինարարությունն ու ճանապարհաշինարարությունը առաջ էին մղվում կոլտնտեսությունների և պետության միջոցներով։ Բանվորների և կոլտնտեսականների համատեղ գործունեությունը ավելի քան ամրապնդում էր այդ երկու դասակարգերի դաշինքը։

1950—1965 թվականներին ընկած ժամանակաշրջանում հանրապետության գյուղի և քաղաքի միջև էլ ավելի ամրապնդվեցին կուլտուրական կապերը։ Գյուղում նոր թափով ծավալվեց կուլտուր-կենցաղային հիմնարկների շինարարությունը, որը մեծ մասամբ կատարվում էր պետության և կոլտնտեսությունների համատեղ ջանքերով։ Գյուղի կուլտուրական կյանքում խոշոր դեր էին կատարում կուլտուրայի տները, ակումբները, գրադարանները, գեղարվեստական ինքնագործունեության խմբերը, օլիմպիադաները, ֆեստիվալները, ստուգատեսները, կուլտուրայի ժողովրդական համալսարանները, թեմատիկ երեկոները, միջհանրապետական կուլտուրական միջոցառումները և այլն։

Հայաստանի գյուղի կյանքում վիթխարի գեր են կատարում կինոն, ռադիոն, հեռուստատեսությունը, քաղաքից գյուղ մեկնող թատերական և երաժշտական խմբերը, ժողովրդական ֆիլհարմոնիան և այլն, որոնց միջոցով գյուղի կուլտուրան աստիճանաբար բարձրանում, հասնում է քաղաքի կուլտուրական մակարդակին։

Կոլտնտեսային աշխատավորության կենցաղի մեջ են թափանցել մարդատար ավտոմեքենաները, սառնարանները, լվացքի, կարի մեքենաները և բազմաթիվ այլ կենցաղային իրեր, դրանով գյուղական բնակչության պահանջը աստիճանաբար հասնում է քաղաքի բնակչության պահանջարկին։ Այդ ամենի շնորհիվ քաղաքի կուլտուրան ու կենցաղը ներ է թափանցում գյուղ, էլ չենք խոսում այն մասին, որ Հայաստանի գյուղում վաղուց ի վեր վերացված է անգրագիտությունը։

Գյուղում աճում է ինտելիգենցիան, նա դառնում է ավելի կատարյալ, ակտիվորեն մասնակցում կոլտնտեսականների քաղաքական ու կուլտուրական մակարդակի բարձրացմանը։

Հայաստանի գյուղերում գործում են մոտ 3000 ինքնագործ խմբեր, որոնց մեջ ընդգրկված են ավելի քան 40 հազար մարդ, գյուղական գրադարանների գրքային ֆոնդը անցնում է 4 միլիոն օրինակից։ 15 խոշոր գյուղերում գործում են կուլտուրայի համալսարաններ։ 1965 թվականի հունվարին ստեղծվեց ժողովրդական ֆիլհարմոնիան, որը հաջողությամբ ղեկավարում է ինքնագործ խմբերի գործունեությունը։

Բանվոր դասակարգի և կոլտնտեսային գյուղացիության դաշինքի զարգացումն ու ամրապնդումը ղեկավարում է կոմունիստական կուսակցությունը։ Այդ ժամանակաշրջանում ակտիվ գործունեություն ծավալեցին նաև գյուղական կուսակցական կազմակերպությունները։ ՍՄԿՊ Կենտկոմի սեպտեմբերյան (1953 թ.) պլենումի որոշումով ՄՏԿ-ներին կից ստեղծվեցին հրահանգչական խմբեր, կուսակցական շրջկոմի մի քարտուղարի ղեկավարությամբ, որոնք գյուղում ծավալեցին քաղաքական կազմակերպչական լայն գործունեություն, ակտիվացրին գյուղի կուսակցական կազմակերպությունները։ Այդ կազմակերպությունները կարողացան սեփական ուժերով ղեկավարել կոլտնտեսային արտադրությունն ու գյուղական ամբողջ կյանքը։ Նկատելով դրանից, 1957 թ. հոկտեմբերին, ՍՄԿՊ Կենտկոմը որոշեց վերացնել ՄՏԿ-ներին կից կուսակցական խմբերը։

Գյուղական կուսակցական կազմակերպությունները քանակապես ու որակապես աճեցին հատկապես 1958 թվականից հետո, երբ վերացան ՄՏԿ-ները և նրանց ինժեներա-տեխնիկական ու մեխանիզատորական կադրերը՝ агрономները, зоотехникներն ու անասնաբուժները փոխադրվեցին անմիջապես կոլտնտեսություններ։ Գյուղատնտեսության այս մասնագետների մեծ մասը կոմունիստներ էին։ Գյուղական կուսակցական կազմակերպությունների հետ ուժեղացան և ակտիվացան նաև կոմերիտական և հասարակական մյուս կազմակերպությունները։

Կուսակցությունը գլխավորելով բանվոր դասակարգի ու կոլտնտեսային գյուղացիության տնտեսական ու քաղաքական դաշինքը, ավելի քան ամրապնդեց սովետական հասարակության քաղաքական-բարոյական միասնությունը, որը հանդիսացավ մեր օրերում բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի կարևոր առանձնահատկություններից մեկը։ Այդ անխախտ դաշինքը դարձավ հզոր ուժ՝ սովետական ժողովրդի միասնությունը, երկրի քաղաքական, տնտեսական և կուլտուրական վերելքը կազմակերպելու համար։

Հենվելով բանվոր դասակարգի և կոլտնտեսային գյուղացիության ամրակուռ դաշինքի վրա, սովետական ժողովուրդը մեծագույն հաղթանակներ տարավ սոցիալիզմի լիակատար ու վերջնական կառուցման և կոմունիզմի ծավալուն շինարարության ճանապարհին։ Շնորհիվ այդ դաշինքի էլ ավելի բարձրացավ Սովետական Միության հեղինակությունը միջազգային կյանքում։

Վերջապես մյուս կարևոր առանձնահատկությունը դա կոլտնտեսությունների և կոլտնտեսականների նյութական շահագրգռվածության բարձրացումն է, որը 1953—1958 թվականներին խրախուսվում էր, ցավոք 1959 թվականից մինչև 1964 թվականը այն հետին պլանի վրա մղվեց, որը լրջորեն վնասեց գյուղատնտեսության էկոնոմիկայի բարձրացմանը։

1961—1964 թվականներին գյուղատնտեսության և արդյունաբերության վերակառուցման անվան տակ փաստորեն դիմադրվեց բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի ամրապնդող ու խարսխող քաղաքական օղակներից ամենակարևորը՝ տեղական սովետները, որոնք հիմնականում հեռու քաշվեցին ժողովրդական տնտեսության այդ երկու ճյուղերի համատեղ ղեկավարությունից։ Միևնույն տերիտորիայի վրա ստեղծվեցին իրարից անջատ և անկախ՝ արդյունաբերական և գյուղատնտեսական կուսակցական արտադրական կոմիտեներ և սովետներ։ Ինչպես նշեց կուսակցության Կենտրոնական կոմիտեի մարտյան պլենումը, այդ արհեստական բաժանումը չէր բխում կյանքի թելա-

դրանքից, այլ հետևանք էր սոցիալիստական շինարարության անցած հարուստ փորձի անտեսմանը։

1950—1965 թվականներին խոշոր տեղաշարժ կատարվեց Սովետական Հայաստանի արդյունաբերական էկոնոմիկայի զարգացման մեջ։ Այդ ժամանակաշրջանում առաջացան արդյունաբերական նոր, ավելի զարգացած ճյուղեր, որոնք լուրջ փոփոխություններ մտցրին հանրապետության կյանքում։ Ոչ միայն քանակապես, այլ նաև որակապես աճեց բանվոր դասակարգը։ Արդյունաբերական ձեռնարկություններ ստեղծվեցին հանրապետության բոլոր շրջաններում և շատ գյուղերում, դրա շնորհիվ նախկին հետամնաց գյուղերը դարձան սոցիալիստական քաղաքներ։ Այժմ հանրապետությունն ունի 23 քաղաք և 27 քաղաքատիպ ավան, որոնք տեղաբաշխված են ոչ միայն Երևանի շուրջը, այլ ամբողջ Հայաստանով մեկ։ Չկա մի շրջան, որը չունենա արդյունաբերական մի քանի ձեռնարկություններ, որոնց բանվորական խոշոր կոլեկտիվներն իրենց կազմակերպվածությամբ, աշխատանքային բարձր արտադրողականությամբ, կուլտուրայով, սոցիալիստական ապրելակերպով, քաղաքական բարձր գիտակցականությամբ շներգործեն շրջակա գյուղերի, կոլտնտեսականների տնտեսության, կենցաղի և հոգեբանության վրա։ Բանվոր դասակարգն իր շարքերից գյուղ ուղարկեց հազարավոր մեխանիզատորներ, սոցիալիստական գյուղատնտեսության կազմակերպիչներ և ղեկավարներ։ Սոցիալիստական արդյունաբերության բուռն զարգացման շնորհիվ, հանրապետության գյուղատնտեսությունը ենթարկվեց համակողմանի մեքենայացման։ Արդյունաբերական շատ ձեռնարկությունների կոլեկտիվները հաջողությամբ կատարում ու գերակատարում են գյուղատնտեսության պատվերները։ Ավելի բարձր աստիճանի հասան արդյունաբերության և գյուղատնտեսության տնտեսական կապերը. գյուղատնտեսական աշխատանքների կոմպլեքսային մեքենայացումը, ավտոմատացումը, հողի քիմիական մշակումը, տեխնիկական առաջադիմությունը, նոր ուղու վրա դրին կոլտնտեսային գյուղի էկոնոմիկայի զարգացումը։ Պետության և կոլտնտեսությունների համատեղ միջոցներով շարունակվում են կառուցվել էլեկտրակայաններ, ջրանցքներ, խճուղային ճանապարհներ, կուլտուրական օբյեկտներ, որոնք ամրապնդում և նոր աստիճանի են բարձրացնում քաղաքի և գյուղի ոչ միայն տնտեսական, այլ նաև կուլտուրական կապերը։

Մեր ուսումնասիրած ժամանակաշրջանում Հայաստանի կոմունիստական կուսակցության անդամների թիվը 53 հազարից հասավ 110 հազարի։ Աճեց գյուղական կուսակցական կազմակերպությունների թիվը։ Այժմ հանրապետությունում չկա մի կոլտնտեսություն, որը չունենա իր կուսակցական կազմակերպությունը։ Աշխուժացավ կուսակցական աշխատանքը քաղաքում և գյուղում։ Ուժեղացավ քաղաքական պրոպագանդան, մասսաների կոմունիստական դաստիարակության գործը, ակտիվացավ սովետական հասարակայնությունը։ Այդ ժամանակաշրջանում քանակապես և որակապես աճեց նաև գյուղական ինտելիգենցիան, որը կուսակցական կազմակերպությունների ղեկավարությամբ ակտիվացրեց իր գործունեությունը գյուղական բնակչության կուլտուրական մակարդակի բարձրացման գործում։ Աճեց բանվոր դասակարգի և կոլտնտեսային գյուղացիության ստեղծագործական ակտիվությունը։ Սոցիալիստական մրցության նոր ձևերը քաղաքից փոխադրվեցին նաև գյուղ. այժմ հանրապետության շատ կոլտնտեսություններում ծավալվում է կոմունիստա-

կան աշխատանքի վիթխարի շարժումը, որի նշանաբանն է՝ «հանուն հարուստ հեկտարի»։ Գյուղում նոր թափ ստացավ կուլտուր-կենցաղային հիմնարկների շինարարությունը։ Հանրապետությունում չկա մի գյուղ, որը չունենա ակումբ, գրադարան, դպրոց, ռադիո, հեռախոս և այլն։ Բոլոր գյուղերում կան կինոցուցադրման կետեր, մեծ չափով ծավալվում է գեղարվեստական ինքնագործունեությունը, որը, քաղաքի պրոֆեսիոնալ ստեղծագործական կոլեկտիվների գրական ազդեցության շնորհիվ, օրեցօր բարձրացնում է իր որակը, դառնում գյուղական բնակչության հոգեկան կյանքի լավագույն կերտողներից, նոր մարդու դաստիարակողներից մեկը։

Կոմունիզմի կառուցման նոր ժամանակաշրջանում էլ ավելի է ամրապնդվում սովետական ժողովուրդների քաղաքական-բարոյական միասնությունը, բանվոր դասակարգի և կոլտնտեսային գյուղացիության ամրակուռ դաշինքը։

Բանվոր դասակարգի և կոլտնտեսային գյուղացիության դաշինքի ամրապնդման գործում խոշոր ավանդ մտցրեց ՍՄԿՊ Կենտկոմի 1965 թ. մարտյան պլենումը, որը վեր հանեց մեր երկրի գյուղատնտեսության մեջ տեղ գտած թերությունները և սխալները, նշեց նրանց վերացման ուղիները։

Կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ, ծավալելով համաժողովրդական պայքար գյուղատնտեսության նոր վերելքի համար, հանրապետության բանվոր դասակարգը և սոցիալիստական արդյունաբերությունը ավելի ուժեղացրին օգնությունը կոլտնտեսային գյուղին։ Պլենումից հետո զգալի բեկում մտցվեց գյուղատնտեսության զարգացման մեջ՝ ուժեղացավ գյուղատնտեսության էլեկտրիֆիկացումը, գերակատարվեցին տրակտորների, տրակտորային շարժիչների, ավտոմոբիլային շարժիչների, ավտոմեքենաների, էլեկտրաշարժիչների, հացահատիկային կոմբայնների, մաշված մասերի կենտրոնացված վերանորոգման 1965 թ. պլանները[2]։ Բոլոր շրջաններում ստեղծվեցին գյուղատնտեսական մեքենաների վերանորոգման և մասնագիտացված արհեստանոցներ։ Մեծ աշխատանք կատարվեց անասնապահական ֆերմաների կոմպլեքսային և աշխատատար պրոցեսների մեքենայացման ուղղությամբ։ Ղեկավարվելով կուսակցության Կենտկոմի մարտյան պլենումի որոշումներով ուժեղացվեց հանրապետության գյուղատնտեսության քիմիացումը։ Եթե 1964 թ. գյուղատնտեսությանը տրվել է 120 հազար տոննա հանքային պարարտանյութ, ապա 1965 թ. տրվեց 170 հազար տոննա, այսինքն 50 հազար տոննայով ավելի[3]։ Այժմ հանրապետությունն ունի պահանջվող բոլոր քիմիական նյութերը և թունաքիմիկատները, որոնց միջոցով պայքար է կազմակերպվում բույսերի հիվանդությունների դեմ։

Կենսագործելով ՍՄԿՊ Կենտկոմի մարտյան պլենումի որոշումները հանրապետության գյուղատնտեսությունը գերակատարեց տեխնիկական, բանջարա-բոստանային, հացահատիկային կուլտուրաների և անասնապահական մթերքների արտադրության 1965 թ. պլանները։ Արդյունաբերության և գյուղատնտեսության հետագա զարգացման ուղիներ նշեցին ՍՄԿՊ Կենտկոմի 1965 թ. սեպտեմբերյան պլենումը և կուսակցության XXIII համագումարը։

ՍՄԿՊ XXIII համագումարը նշեց, որ սովետական ժողովուրդն իր անձնվեր աշխատանքով հաջողությամբ կատարեց ժողովրդական տնտեսության

2 «Հայգյուղտնտտեխնիկա» հանրապետական միավորման ընթացիկ արխիվ։
3 Նույն տեղում։

զարգացման յոթնամյա պլանը։ Սովետական Միությունն էլ ավելի հզորացավ տնտեսական, քաղաքական և ռազմական տեսակետից։ Համագումարը գոհունակությամբ նշեց, որ «Բանվոր դասակարգը, կոլտնտեսային գյուղացիությունը և ինտելիգենցիան, լուծելով ՍՄԿՊ ծրագրում առաջադրված պատմական խնդիրները, հաշվետու ժամանակաշրջանում խոշոր հաջողությունների են հասել էկոնոմիկայի ու կուլտուրայի զարգացման, սովետական ժողովրդի կենսամակարդակի բարձրացման գործում։ Յոթնամյա պլանի կատարման շնորհիվ կարևոր քայլ արվեց կոմունիզմի նյութա-տեխնիկական բազայի ստեղծման ճանապարհին»[4]։ Յոթնամյակի տարիներին երկրի արտադրական ուժերի զարգացման հետ միաժամանակ կատարելագործվում էին սոցիալիստական հասարակական հարաբերությունները։ Մեր հասարակարգը դարձավ էլ ավելի կայուն ու զորեղ, ինչպես նշեց ընկ. Լ. Բրեժնևը, էլ ավելի ամրապնդվեցին սոցիալիստական սեփականության համաժողովրդական և կոլտնտեսային-կոոպերատիվ ձևերը։

Ամփոփելով յոթնամյա պլանի արդյունքները համագումարն արձանագրեց, որ աճեցին երկրի հանրային հարստությունը և աշխատավորների եկամուտները, բարձրացվեց աշխատավարձը, ընդլայնվեցին արտադրության կառավարման դեմոկրատական հիմունքները։ Յոթնամյակի տարիներին երկրի բանվորների թիվը ավելացավ 14 միլիոնով։ Բանվորների թվի նման աճը վկայում է մեր երկրի ինդուստրացման արագ տեմպերի, բանվոր դասակարգի դերի հետագա ուժեղացման և սովետական կարգերի կայունության մասին։ Այժմ երկրի բնակչության 75,4 տոկոսը կազմում են բանվորներն ու ծառայողներն իրենց ընտանիքներով, իսկ 24,6 տոկոսը՝ կոլտնտեսային գյուղացիությունը։ «Կոլտնտեսային գյուղացիության հետ բանվոր դասակարգի դաշինքը ցեմենտում է սովետական ամբողջ ժողովրդի միասնությունը»[5]— ասում է Լ. Ի. Բրեժնևը։

Համագումարն արձանագրեց, որ ՍՄԿՊ XXI համագումարից հետո կուսակցության կոչով երկրի բանվորները, կոլտնտեսականները, ինտելիգենցիան լայն մրցություն ծավալելով սովետական էկոնոմիկայի նոր հուժկու վերելքի համար, էլ ավելի ամրապնդեցին երկրի տնտեսական հզորությունը, զարգացրին նրա ինդուստրիան։ Մեծ գործ կատարեցին նաև սոցիալիստական գյուղատնտեսության աշխատողները։ Համագումարը միաժամանակ վեր հանեց նաև գյուղատնտեսության մեջ տեղ գտած լուրջ թերությունները։ Նշեց, որ յոթնամյա պլանն այդ բնագավառում թերակատարվեց, իսկ այդ նկատելիորեն արգելակեց և բացասական անդրադարձավ թեթև և սննդի արդյունաբերության աճի տեմպերի վրա, բացասաբար ազդեց բնակչության կենսամակարդակի բարձրացման վրա։ Համագումարը տվեց այն ուղիները, որոնց կենսագործումով էլ ավելի կամրապնդվի բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքը։

ՍՄԿՊ XXIII համագումարը հաստատեց ժողովրդական տնտեսության զարգացման 1966—1970 թվականների հնգամյա պլանի դիրեկտիվները։ Հընդամյակի հիմնական խնդիրն է՝ ապահովել մեր հասարակության նշանակա-

---

4 Տե՛ս Լ. Ի. Բ ր ե ժ ն և, ՍՄԿՊ Կենտկոմի հաշվետու զեկուցումը Սովետական Միության կոմունիստական պարտիայի 23-րդ համագումարին։

5 Նույն տեղում։

լի առաջընթացը կոմունիստական շինարարության ուղիով, էլ ավելի զարգացնել նյութա-տեխնիկական բազան, ամրապնդել երկրի ռազմական հզորությունը։ «Պարտիան հնգամյակի գլխավոր տնտեսական խնդիրն է համարում՝ գիտության ու տեխնիկայի նվաճումների ըստ ամենայնի օգտագործման, ամբողջ հանրային արտադրության ինդուստրիալ զարգացման, նրա արդյունավետության և աշխատանքի արտադրողականության բարձրացման հիման վրա ապահովել արդյունաբերության հետագա նշանակալի աճ, գյուղատնտեսության զարգացման արագ ու կայուն տեմպեր և դրա շնորհիվ էապես բարձրացնել ժողովրդի կենսամակարդակը, ավելի լրիվ բավարարել բոլոր սովետական մարդկանց նյութական ու կուլտուրական պահանջմունքները»[6]։

Հնգամյա պլանով նախատեսվում է մեծացնել ազգային եկամուտը 38—41 տոկոսով, բնակչության մեկ շնչին ընկնող ռեալ եկամուտները ավելացնել 1,3 անգամ։ Համագումարը նախատեսում է «Գյուղական և քաղաքային բնակչության կենսամակարդակի հետագա մեծացման միջոցառումներ, հաղթահարելով քաղաքի ու գյուղի սոցիալ-տնտեսական և կուլտուր-կենցաղային տարբերությունները, էլ ավելի ամրապնդել բանվոր դասակարգի ու գյուղացիության դաշինքը, ամբողջ սովետական ժողովրդի միասնությունը»[7]։

Հնգամյակի տարիներին արդյունաբերությունը կաճի 1,5 անգամ, զգալիորեն կմեծանա գյուղատնտեսական մթերքների արտադրությունը։ Կոմունիզմի նյութա-տեխնիկական բազայի ստեղծման ժամանակաշրջանում նոր զարգացում կապրի եղբայրական երկու դասակարգերի ամրակուռ դաշինքը։

Հնգամյակում կաճեն կոմունիզմի նյութա-տեխնիկական բազան, աշխատավորների կենսամակարդակը և նոր վերելք կապրի ժողովրդական տնտեսությունը, էկոնոմիկայում տեղի կունենան խորը որակական փոփոխություններ, կկատարելագործվեն սոցիալ-տնտեսական հարաբերությունները և կաճեն արտադրողական ուժերը։ Ավելի կմերձենան արդյունաբերության և գյուղատնտեսության զարգացման տեմպերը։ Կբարելավվեն տեխնիկան և տեխնոլոգիան, կբարձրանա թողարկվող արտադրանքի որակը։ Ճիշտ կտեղաբաշխվեն արտադրողական ուժերը և այլն։

ՍՄԿՊ Կենտկոմի մարտյան պլենումից հետո (1965) կուսակցության Կենտկոմը և կառավարությունը բարելավեցին պլանավորման գործը, մշակեցին տնտեսական խթանման մի շարք միջոցառումներ, որոնց հետևանքով բարձրացավ գյուղատնտեսության արտադրությունը։ Միջոցներ են մշակվում, որպեսզի պայմաններ ստեղծվեն գյուղում արտադրողական ուժերի հետագա աճի համար, արդյունաբերության և գյուղատնտեսության զարգացման անհամամասնություններ վերացնելու համար։ Նոր հնգամյա պլանով նախատեսվում է գրեթե կրկնակի անգամ ավելացնել գյուղատնտեսության կապիտալ ներդրումները, նախորդ հինգ տարիների համեմատությամբ, այս հնգամյակում ավելի կարտադրվի 700 հազար տրակտոր, 680 հազար բեռնատար ավտոմեքենա, չորս միլիարդ ռուբլու գյուղատնտեսական մեքենա։ Հնգամյակում գյուղատնտեսության մեջ էլեկտրաէներգիայի ընդհանուր սպառումը կաճի մոտավորապես երեք անգամ։ Կոլտնտեսություններն ու սովխոզները կստանան ավելի

6 Տե՛ս ՍՄԿՄ ժողովրդական տնտեսության զարգացման 1966—1970 թվականների հնգամյա պլանի՝ ՍՄԿՊ XXIII համագումարի դիրեկտիվները, «Սովետական Հայաստան», № 84, 10 ապրիլի, 1966։

7 Նույն տեղում։

շատ պարարտանյութ։ Հնդամյակի դիրեկտիվներում նախատեսված է ավելացնել հացահատիկի, բրնձի, ձավարատու կուլտուրաների, կարտոֆիլի, բանջարեղենի, բամբակի, վուշի, շաքարի ճակնդեղի, արևածաղկի, թեյի, մրգերի, խաղողի մշակելի տարածությունները, զգալիորեն բարձրացնել նրանց բերքատվությունը։ Իրագործվելու է մելիորատիվ աշխատանքների լայն ծրագիր։ Առաջնահերթ խնդիր է համարվում՝ ամրապնդել գյուղատնտեսական տեխնիկայի նորոգման բազան, «Գյուղտնտեխնիկայի» ձեռնարկությունները, կոլտնտեսություններն ու սովխոզները զինել ժամանակակից սարքավորումներով, բարելավել մեխանիզատորական կադրերի պատրաստման գործը, բարձրացնել նրանց նյութական շահագրգռվածությունը։ «Գյուղատնտեսության արտադրողական ուժերի զարգացումը,—ասում է Լ. Ի. Բրեժնևը,—պահանջում է գյուղի հասարակական հարաբերությունների հետագա կատարելագործում»[8]։ Համագումարը քննադատեց նախկինում վարած այն սխալ կուրսը, ըստ որի հետ մնացող կոլտնտեսությունները վերակազմվում էին սովխոզների։ ՍՄԿՊ Կենտկոմի 1965 թ. մարտյան պլենումից հետո այդ սխալն ուղղվում է։ Կոլտնտեսային սիստեմի հետագա ամրապնդման գործում կարևոր դեր կխաղա կոլտնտեսականների համամիութենական երրորդ համագումարը, որը տեղի կունենա մոտ ժամանակներս։

Կուսակցության համագումարն արձանագրեց, որ զգալիորեն ընդլայնվել են կոլտնտեսությունների փոխադարձ կապերն ու փոխհարաբերությունները պետական ձեռնարկությունների և կազմակերպությունների հետ։ Դա հենց բանվոր դասակարգի և կոլտնտեսային գյուղացիության դաշինքի ամրապնդման կարևոր օղակներից մեկն է։

Համագումարը նշեց, որ անչափ աճել է կադրերի, կոլտնտեսային արտադրության բոլոր աշխատավորների քաղաքական և կուլտուրական մակարդակը։ Համագումարում հարց բարձրացվեց շրջաններում, մարզերում, երկրամասերում, հանրապետություններում և կենտրոններում կոլտնտեսային-կոոպերատիվ ընտրովի օրգաններ ստեղծելու մասին, ըստ որում «կառավարման այդպիսի դեմոկրատական ձևը,—ասում է Լ. Ի. Բրեժնևը,—թույլ կտա կոոպերատիվ տնտեսությունների առավելություններն ավելի լրիվ օգտագործել գյուղատնտեսության արտադրության հետագա զարգացման համար, զգալիորեն ընդլայնել միջկոլտնտեսային արտադրական և տնտեսական կապերը, առավել ռացիոնալ կերպով օգտագործել բնական, նյութա-տեխնիկական և աշխատանքային ռեսուրսները, բարելավել արտադրանքի վերամշակման ու իրացման կազմակերպումը»[9]։

Համագումարը ցուցում տվեց ուժեղացնել գիտության նվաճումների ներդրումը գյուղատնտեսական արտադրության մեջ, բարձրացնել կոլտնտեսությունների և սովխոզների կուսակցական կազմակերպությունների մարտունակությունը։

Բանվոր դասակարգի և կոլտնտեսային գյուղացիության դաշինքի ամրապրնդման գործում կարևոր նշանակություն ունի մեր երկրի բանվորների, գյուղացիների, ինտելիգենցիայի և ողջ աշխատավորության կյանքի նյութա-

---

8 Տե՛ս Լ. Ի. Բ ր ե ժ ն և, ՍՄԿՊ Կենտկոմի հաշվետու զեկուցումը Սովետական Միության կոմունիստական պարտիայի XXIII համագումարին։

9 Տե՛ս նույն տեղում։

կան մակարդակի աճը, գիտության ու կուլտուրայի զարգացումը։ ՍՄԿՊ XXIII համագումարը նշեց, որ ՍՍՌՄ ազգային եկամուտը ամենամեծերից մեկն է աշխարհում։ Ազգային եկամտի գրեթե երեք քառորդն օգտագործվում է սովետական մարդկանց կյանքի նյութական մակարդակի բարձրացման և կուլտուրայի զարգացման վրա։ Ավելացվել է բանվորների և ծառայողների աշխատավարձը, իջեցվել են լայն օգտագործման ապրանքների գները, ընդլայնվել է դպրոցական, առողջապահական, կուլտուր-լուսավորական հիմնարկների, բնակարանային շինարարության ցանցը։ Նոր հնգամյակում քաղաքներում, բանվորական ավաններում և սովխոզներում պետք է կառուցվեն 480 միլիոն քառակուսի մետր տարածությամբ բնակելի տներ։ Գյուղական բնակչության ու կոլտնտեսությունների ուժերով կկառուցվեն 2—2,5 միլիոն տներ։ Գյուղի նոր պլանավորումը, կոլտնտեսականների համար հարմարավետ տների կառուցումը կարևոր պայման է դաշինքի ամրապնդման, քաղաքի և գյուղի միջև գոյություն ունեցող էական տարբերությունների վերացման գործում։

Համագումարը խնդիր դրեց բարելավել առևտրի վիճակը քաղաքում և գյուղում, արմատապես բարելավել բնակչության սպասարկումը։

Բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի հետագա զարգացման համար կարևոր նշանակություն ունի բանվորների, ծառայողների և կոլտնտեսականների թոշակների ավելացումը։ Առաջիկա հնգամյակում նախատեսվում է բարձրացնել նաև կոլտնտեսականների կենսաթոշակները։ Հնգամյակի տարիներին հնարավորությունն կընձեռվի էլ ավելի մոտեցնելու գյուղական ու քաղաքային բնակչության կենսամակարդակը, բարձրացնելու երկրի ընդհանուր մակարդակը, որով աստիճանաբար կանհետանան քաղաքի ու գյուղի միջև, մտավոր ու ֆիզիկական աշխատանքի միջև գոյություն ունեցող էական տարբերությունները։

«Այդ բոլոր միջոցառումների քաղաքական նշանակությունն ամենից առաջ այն է,—ասում է Լ. Բ. Բրեժնևը,—որ դրանք էլ ավելի կամրապնդեն բանվոր դասակարգի և գյուղացիության անխախտ դաշինքը, ամբողջ սովետական ժողովրդի կուռ միասնությունը, կհանդիսանան մեր պարտիայի ու սովետական ժողովրդի նոր, նշանակալի նվաճումը»[10]։

ՍՄԿՊ XXIII համագումարը նշեց, որ սովետական հասարակության կյանքում աճել է կուսակցության դերը, ամրապնդվել ու զարգացել են նրա կապերը մասսաների հետ։ Կուսակցությունն ուղղություն է տալիս ու կազմակերպում սոցիալիստական հասարակության կյանքը, բանվոր դասակարգի ու գյուղացիության դաշինքի հետագա զարգացումը։ Նա հաջողությամբ է կատարում «Սովետական ամբողջ ժողովրդի ուսուցչի, կազմակերպչի և քաղաքական առաջնորդի իր դերը»[11]։

Աշխատավորների դեպուտատների սովետները բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի քաղաքական հիմքն են։ Սովետական պետական սիստեմի սոցիալիստական դեմոկրատիզմը լավագույն ձևով մարմնավորված է աշխատավորների դեպուտատների սովետների մեջ, որոնք հանդիսանում են ինչպես պետական իշխանության օրգանները, այնպես էլ մեր ժողովրդի

10 Նույն տեղում։
11 Նույն տեղում։

ամենամասսայական, հասարակական կազմակերպությունները[12]։ Համագումարը գտավ, որ սովետների գործունեության բարելավումը պետք է իրագործվի դրանց հետագա դեմոկրատացման հիման վրա։ Դրա հետևանքով էլ ավելի կբարձրանա աշխատավորների դեպուտատների սովետների սեսիաների նշանակությունը, տեղական սովետներում լայն իրավունքներ կտրվեն լուծելու տնտեսական, ֆինանսական, հողային, տեղական արդյունաբերական ձեռնարկությունների, բնակչության կենցաղային ու սոցիալ-կուլտուրական սպասարկման հարցերը։ Համագումարը խնդիր դրեց ակտիվացնել տեղական սովետների հանձնաժողովների աշխատանքները, ապահովել դեպուտատների կանոնավոր հաշվետվությունները ընտրողների առջև։ Այդ կապակցությամբ համագումարի բանաձևում ասված է. «Առանձնահատուկ նշանակություն է ստանում աշխատավորների դեպուտատների սովետների դերի բարձրացումը, որպեսզի նրանք լրիվ չափով օգտագործեն իրենց լիազորությունները տնտեսական ու կուլտուրական շինարարության խնդիրների իրականացման և կատարման ստուգման գործում, ավելի մեծ նախաձեռնություն ցուցաբերեն պլանային, ֆինանսական, հողային հարցերը լուծելու, տեղական արդյունաբերության ձեռնարկությունները, բնակչության կենցաղային ու սոցիալ-կուլտուրական սպասարկումը ղեկավարելու գործում»[13]։ Այնուհետև բանաձևում նշվում է, որ սովետները կոչված են բարձրացնելու գործադիր օրգանների, դեպուտատների և պաշտոնատար անձանց պատասխանատվությունը ժողովրդի հանդեպ, ակտիվացնելու սեսիաների աշխատանքը, նրանց քննարկմանը ներկայացնելու ավելի բազմազան հարցեր[14]։

Բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքը կարող է անսասան մնայ, երբ ուժեղ են սովետական զինված ուժերը։ Կարևոր խնդիր համարվեց էլ ավելի ուժեղացնել երկրի պաշտպանությունը։

Աճելու է արհմիությունների՝ բանվոր դասակարգի այդ ամենամասսայական կազմակերպությունների դերը։ Ներկայումս արհմիությունների շարքերում կա մոտ 80 միլիոն մարդ։ 23 միլիոն մարդ՝ լենինյան կոմունիստական երիտասարդական միության շարքերում։ Կոմերիտմիությունը սոցիալիստական հասարակարգի կառուցման գործում թե՛ քաղաքում և թե՛ գյուղում հրաշքներ է գործում։

ՍՄԿՊ XXIII համագումարը կարևոր տեղ հատկացրեց գաղափարական դաստիարակչական աշխատանքին, ընդգծելով, որ կուսակցությունը միշտ բարձր է պահել մարքսիզմ-լենինիզմի հեղափոխական տեսության ամենահաղթ դրոշը։

Բանվոր դասակարգի և գյուղացիության մարտական դաշինքը ստեղծվել, ամրապնդվել ու զարգացել է մարքս-լենինյան ուսմունքի հիման վրա։

Կուսակցությունը գտնում է, որ տեսությունը այսուհետև էլ պետք է հարթի պրակտիկայի ճանապարհը, լուսավորի մեր առաջընթացը։ Մարքսիզմ-լենինիզմի գաղափարների կենսագործումը կապված է աշխատավորության ստեղծագործության, նրա պրակտիկայի, նոր մարդու դաստիարակության հետ։ Համագումարը պահանջեց բարելավել գաղափարական-քաղաքական աշխատանքը

---

12 Տե՛ս նույն տեղում։

13 Տե՛ս ՍՄԿՊ XXIII համագումարի բանաձևը, «Սովետական Հայաստան», 9 ապրիլի, 1966։

14 Նույն տեղում։

հատկապես գյուղում։ «Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման պայքարի պրոցեսում արմատապես փոխվեց գյուղի աշխատավորի հոգեբանությունը,—ասում է Լ. Բ. Բրեժնևը,—նա ավելի կրթված ու կուլտուրական դարձավ, էլ ավելի ամրապնդվեց բանվոր դասակարգի ու գյուղացիության դաշինքը»[15]։ Դրա հետ մեկտեղ նշվեցին նաև գյուղում կատարվող կուլտուր-լուսավորական աշխատանքի լուրջ թերությունները։ Համագումարը գտավ, որ կուսակցական, սովետական, արհմիութենական, կոմերիտական կազմակերպությունները, գաղափարական բոլոր հիմնարկները պետք է պայքարեն այդ թերությունների արագ վերացման համար։ Գյուղի կուլտուրական մակարդակի բարձրացման գործում մեծ անելիքներ ունեն քաղաքի կուլտուր-լուսավորական հիմնարկները, թատրոնները, ստեղծագործական միությունները և կազմակերպությունները։ Համագումարը խնդիր դրեց էլ ավելի ամրապնդել քաղաքի և գյուղի կուլտուրական կապերը։

Այսպիսով, ՍՄԿՊ XXIII համագումարը խոշոր ավանդ մուծեց ոչ միայն մեր երկրի հետագա զարգացման, կոմունիզմի նյութա-տեխնիկական բազայի ամրապնդման, գաղափարական աշխատանքի ուժեղացման, այլ նաև բանվոր դասակարգի ու կոլտնտեսային գյուղացիության դաշինքի հետագա զարգացման և ամրապնդման գործում։

---

15 Նույն տեղում։